

Կայացավ Տավուշի մարզպետ Հովիկ Աբովյանի հերթական մամուլի ասուլիսը

Դեկտեմբերի 17-ին, Չինարի կատարած աշխատանքային այցի ավարտին կայացավ նաև Տավուշի մարզպետ Հովիկ Աբովյանի մամուլի ասուլիսը: Այն տարեկան ամփոփիչ ասուլիս էր, որի թեման տարվա ընթացքում իրականացրած ծրագրերն էին, մասնավորապես ՀՀ պետական բյուջեի հատկացումներով կատարված աշխատանքները: Քանի որ ասուլիսը տեղի էր ունենում մարզի խիստ սահմապահ համայնքներից մեկում, ապա լրագրողների հարցերը նույնպես հիմնականում ուղղված էին նմանատիպ խնդիրների բարձրացմանը: Մարզպետը հայտնեց, որ Չինարի գյուղում արդեն ավարտվել են դպրոցի պատուհանների վերատեղադրման և լուսավորության ավելացման աշխատանքները: Նույն համայնքում կառուցվել է նաև հենապատ, որի արդյունքում որոշակիորեն կապահովագրվեն և գյուղամիջյան ճանապարհով երթևեկողները, և մանկապարտեզի սաները: Վերոհիշյալ աշխատանքները կատարելու համար ՀՀ պետբյուջեից առաջինի՝ դպրոցի պատուհանների վերատեղադրման համար, տրամադրվել է 5մլն 760 հազար դրամ, իսկ հենապատի համար՝ 13 մլն 440 հազար դրամ: Մարզպետ Հովիկ Աբովյանը տեղեկացրեց նաև, որ 2014 թվականին առաջնահերթ խնդիրների լուծման նպատակով ՀՀ կառավարության որոշմամբ հատկացված 335.0 մլն դրամ գումարի սահմաններում կատարվել են բավականին աշխատանքներ. 104.0 մլն դրամն օգտագործվել է կրթական հաստատություններում վերանորոգման աշխատանքների վրա: Վերանորոգվել են 7 համայնքի դպրոց և 9 դպրոցներում ռազմագիտության դասասենյակներ: Կողքի դպրոցում կառուցվում է նոր մարզադահլիճ: 185.0 մլն դրամը տրամադրվել է ճանապարհաշինության ոլորտին, վերանորոգվել են համայնքային և միջհամայնքային ճանապարհներ:

3.41.0 մլն դրամ հատկացվել է Այգեձոր համայնքի ոռոգման ջրատարի կառուցման համար, որից կօգտվի 4 համայնք և որի արդյունքում ոռոգելի կդառնա 35 հա հողատարածություն:

Մարզպետ Հովիկ Աբովյանը ներկայացրեց, որ հանրապետությունում 31 սահմանամերձ համայնքի տրվել են հարկային արտոնություններ, որոնցից 22-ը Տավուշի մարզում են: Նա լրագրողներին տեղեկացրեց, որ գործարար շրջանակներից արդեն ցանկություն են հայտնել մարզի նման համայնքներում հոսքագծեր տեղադրելու և արտադրություն հիմնելու համար: Ներկայացրեց նաև այն մեծ ծրագիրը, որ առաջիկայում նախատեսվում է իրականացնել Այգեհովիտի ու Դիտավանի տարածքներում կիլիմսվի ժամանակակից տնտեսություն 50000 գլուխ

Խոզի համար: Լրագրողների կողմից մարզպետ Հովիկ Աբովյանին տրված հարցերը
բազմաբնույթ էին: Դրանք վերաբերում էին մարզի և գյուղատնտեսության, և
ճանապարհաշինության, և համայնքների ընդհանուր զարգացման խնդիրներին: